№ 4 ԱՊՐԻԼ 1895

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՈՎ Է ՄԵՂԱՒՈՐԸ

Ապրիլ, 1895 թ.

Ինչպէս հաղորդում են եւրոպական թերթերը, Սասունի կոտորածի Քննիչ-Յանձնախմբի անդամների մէջ մի վերին աստիճանի տարօրինակ հարց է բարձրացել՝ թէ ո՞ւմ վրայ է ընկնում կոտորածի յանցանքը...

Քաղաքակրթեալ աշխարհը մի ժամանակ կասկածանքով էր վերաբերւում կոտորածին. նա չէր հաւատում, թէ մարդ կոչեալ էակը ընդունակ է այդպիսի գազանային գործողութիւնների, որ այդ տեղեկութիւնները, նկարագրութիւնները շինծու, առասպելական են, որ դա չարանենգ, խռովարար մարդկանց հնարածներն են միջազգային խաղաղութիւնը վրդովելու համար:

Կոտորածը կասկածանքի էր ենթարկում և դիպլոմատեան, որը աւելի ճիշտ և մանրամասն տեղեկութիւններ ուներ եղելութեան մասին, քանի որ նա բացի դեսպաններից ու հիւպատոսներից, ունի ամէն տեղ իւր ագենտները, որոնք անմիջապէս ամենամանրամասն տեղեկութիւն են տալիս իրենց կառավարութեան տեղի ունեցած թէ խոշոր և թէ մանր դէպքերի մասին. այդ ամբողջ աշխարհը գիտէ: Բայց ներկայ պարագաներում դիպլոմատիային երբէք ձեռնտու չէ այդպիսի մի խնդիր ասպարէզ հանել, սուլթանի կառավարութեան վրայ ճնշում գործ դնել ու միջազգային քաղաքական բնաւորութիւն տալ, որովհետև նա կարող է դժւարութիւններ առաջ բերել և գուցէ մինչև իսկ ընդհարման տեղիք տալ, քանի որ իւրաքանչիւր պետութիւն տարբեր, մէկ-մէկու հակառակ շահեր ունին Հայկական խնդրում:

Երբ սարսափը ամբողջովին երևան հանուեց շնորհիւ Հայ յեղափոխական թերթերի, որին արձագանգ տուեց Եւրոպայի ու Ամերիկայի անկաշառ մամուլը, և կասկածանքով վերաբերուող հասարակութիւնը յուզուեց, վրդովուեց, դիպլոմատեան անկարող եղաւ այլևս շարունակել իր բռնած դիրքը, խուլ մնալ և, հասարակական կարծիքի ճնշման տակ, ակամայից ստիպուած եղաւ զբաղուել այդ խնդրով, մանաւադ Անգլիական դիպլոմատեան, և իբրև միջոց յուզուած հասարակութեանը խաղաղացնելու, նա մի Քննիչ-Յանձնախումբ նշանակեց գործը „քննելու“ և „իսկութիւնը երևան հանելու“...

Արդէն այս երևոյթը ինքն ըստ ինքեան աչքի ընկնող մի փաստ է, որ դիպլոմատեայի կողմից սա մի խաղ է, որովհետև անհնարին է, որ Քննիչ-Յանձնախումբ նշանակող դիպլոմատեան տեղեկութիւն չունենար կոտորածի իսկութեան մասին: Միայն մի բան կարելի է ենթադրել.- որ դիպլոմատեան կասկածանքով է վերաբերւում իր ներկայացուցիչներին, որ վերջիններն ևս „յեղափոխականներ“ են և ուզում են եւրոպական խաղաղութիւնը վրդովել, ուստի և հնարովի տեղեկութիւններ են տալիս իրենց պետութիւններին: Իսկ ենթադրել այսպիսի մի բան, աւելի քան խելագարութիւն կը լինի: Բայց դիպլոմատեային հարկաւոր է այդ խաղը՝ խնդիրը ձգձգելու նպատակով, որպէսզի գուցէ այդ ժամանակամիջոցում կոտորածի տպաւորութիւնը թուլանայ, յուզուած հասարակական կարծիքը հանգստանայ ու իրեն յաջողւի գործին այն ընթացքն ու ելքը տալ, ինչպէս իրեն հաճելի է, ինչպէս պահանջում են միջազգային քաղաքական շահերը: Իսկ եթէ այդ չի յաջողւիլ, գոնէ նա հնարաւորութիւն ունենայ սարսափը մի կերպ նսեմացնել և խնդրին այնպիսի բնաւորութիւն տալ, որ պետութիւնների մէջ մեծ դժւարութիւն չծագի, միշտ իրենց լարուած յարաբերութիւնը աւելի ևս չլարւի և ընդհարման տեղիք չտայ, որից սարսափում է մինչև ականջները զինուած իւրաքանչիւր պետութիւն:

Դիպլոմատիայի առաջի յոյսը, որ մի հոգեբանական խաղ էր քաղաքական գոյնով, չարդարացաւ: Քաղաքակրթեալ աշխարհի յուզուած հասարակական կարծիքը ոչ միայն չխաղաղեց, այլ ընդհակառակը, շնորհիւ այն հանգամանքի, որ նոյն իսկ իր զաւակներն են մտնում այդ թշւառ երկիրը, տեղն ու տեղը տեսնում, ստուգում և ի լուր աշխարհի յայտնում կատարած գազանային սարսափը, նա աւելի լայն ծաւալ առաւ և պետութիւնների դիմումները քրօնիքական բնաւորու-

գաւը չէ, որ դրանք զբաղուում են նրա վիճակով, բայց ՝ յուլթեան համար անհրաժեշտ պայմաններ են, որոնք

թիւն ստացան։ Սրանից յետոյ դիպլոմատիային մնում է երկրորդ միջոցը — սարսափը նսեմացնել և ուրիշ գոյն տալ. և ահա ծագում է նշանաւոր հարցը — կոտորածի յանցանքը ո՞ւմ վրայ է ընկնում։ Եւ այս հարցը տալիս է այն դիպլոմատիան, որին բացի հայ յեղափոխականից և հայ ժողովրդից, աւելի ճիշտ կերպով յայտնի է կոտորածը իւր ամենայն մանրամասնութեամբ։ Այս հարցով կոտորածը կասկածների ենթարկող դիպլոմատեան, ակամայից խոստովանում է պաշտօնապէս իւր ներկայացուցիչների բերանով, որ կոտորածը տեղի է ունեցել, չնայած որ իւր Քննիչ Յանձնախումբը դեռ չի վերջացրել իւր խուզարկութիւնները և մինչև իսկ շատ դանդաղ քայլերով է առաջ գնում. բայց, ինչպէս ասացինք, նրան հարկաւոր է կոտորածին ուրիշ գոյն տալ և այդ կարելի է միայն իսկական յանցաւորի տեղ ուրիշը դնել, մեղադրանքը անմեղի վզին բարձել — ճիշտ սուլթանական դատավարութիւն։ Այլապէս փոքր ի շատէ խիղճ ունեցող անհատը, որ մինչև իսկ միայն մի թեթև գաղափար ունի սուլթանի կառավարութեան և սրա ու հայ ժողովրդի յարաբերութեան մասին, հաւատացած ենք, երբէք այսպիսի տարօրինակ ու այլանդակ հարց չի տալ իրան և մի վայրկեան անգամ կանգ չի առնիլ դրա առջև, նա այնքան պարզ ճիշտ և հաստատ է։

Ասում ենք հարցը տարօրինակ ու այլանդակ է, որ դա սուլթանական դատավարութիւն, քննութիւն է, որովհետև դիպլոմատեան, երկրների կառավարիչներն աւելի լաւ գիտեն քան մի ուրիշը, որ մի որևէ երկրում չի կարող տեղի ունենալ այդպիսի քրօնիքական, յարատև կեղեքում, թալան, բռնաբարութիւն, կոտորած, եթէ ինքը կառավարութիւնը չի խրախուսում, չի հովանաւորում, չի մասնակցում։ Նրանք շատ-շատ լաւ գիտեն, որ, ներկայումս կառավարութիւնները ամեն տեղ աւելի ուժեղ են, քան օպոզիցեան, որ եթէ կառավարութիւնները ուզենան, բարեհաճեն, կարող են արեան գետերի մէջ խեղդել իրանց հակառակորդներին, թէև դրանով նրանք իրանց կը տան ամենածանր մահացու վէրք. նա շատ լաւ գիտէ նոյնպէս, որ նոյնն է և Տաճկաստանում։ Սուլթանի կառավարութիւնը, չնայած իւր ներկայ անկանոն կազմակերպութեան, չնայած նրա թուլութեան, եթէ ուզենայ՝ կարող է, չենք ասում անպայման կերպով, գոնէ մի որոշ չափով արգելել քրդերի, զանազան միւտիրների, զապթեաների աւազակութիւնները և զսպել մոլլաներին ու աղնուականներին, որոնք գրգռում են ամբոխը յարձակում գործել ոչ-կրօնակից ժողովրդի վրայ և կոտորած անել։

Մեր խօսքն ընդհանուր առմամբ է. բայց եթէ խօսքը ներս մասնաւորելու լինինք Սասունի վերաբերմամբ մենք կը տեսնենք այդ տեղ ոչ քիւրդի աւարառութիւնը կայ և ոչ էլ մոլեռանդ ամբոխի յարձակումը, այլ որ կոտորածը արել է զօրքը Զաքի և Թահսի փաշաների ղեկավարութեամբ. այս փաստ է։ Նոյնն է ասում դիպլոմատեան և իւր Քննիչ-Յանձնախումբը, խոստովանում է և այժմ ինքը սուլթանի կառավարութիւնը, որ մի ժամանակ ուրանում էր և իւր եւրոպական ներկայացուցիչների ու կաշառած թերթերի միջոցով հերքում հերքումի յետևից էր թխում՝ թէ այդպիսի բան չի եղել, դա միայն խռովարար հայերի շինծու լուրերն են։ Իսկ այժմ մի կողմից աշխատում է յանցանքը գցել քիւրտերի վրայ, իբրև յանցաւորների, նրանց պատժում է, ընտանիքով գաղթեցնում հեռու երկիր (որով միաժամանակ հեռացրած է լինում և վկաներին), նրանց գիւղերը այրում, աւերակ է դարձնում, իսկ միւս կողմից, մի և նոյն ժամանակ, նա ասում է որ զօրքը ուղարկել է Սասուն կարգը վերականգնեցնելու ու զսպելու հայ ապստամբեալներին. իսկ եթէ կոտորած է եղել, յանցանքը իրենը չէ, այլ... մի խօսքով սուլթանի կառավարութիւնը ամեն միջոց գործ է դնում իւր արիւնոտ ձեռները մաքրել... Եւ այս անմիտ ու անամօթ փաստաբանութիւնը հաճելի է թւում դիպլոմատեային, որովհետև ձեռնտու է և ահա նա էլ „փնտրում“ է „անյայտ“ յանցաւորին...

Այո՛ փաստ է, որ կոտորածը արել է զօրքը Զաքի և Թահսի փաշաների ղեկավարութեամբ։ Ներկայ զինուորական կազմակերպութիւնը յայտնի է ամբողջ աշխարհին, յայտնի է որ ոչ մի զինուոր չի՛ յանդգնիլ հրացան արձակել եթէ նրան չի հրամայում, նա չի համարձակիլ չարձակել, երբ նրան հրամայում են, եթէ մինչև իսկ դիմացը կանգնած է իւր եղբայրը, քոյրը, հայրը, մայրը... այս շատ-շատ լաւ գիտէ դիպլոմատեան... Ոչ մի հրամանատար այդպիսի հրաման չի արձակիլ, եթէ նրան պատուիրած, հրահանգ և իրաւունք չէ տուած։ Զինուորը մի գործիք է, որ դնւում է գործադրութեան մէջ հրամանատարի միջոցով, իսկ վերջինիս գործադրութեան մէջ դնողը Բարձրն է, որի ձեռքին է ամբողջ երկրի ղեկը և ճակատագիրը, որից կախուած է միլիոնաւոր մարդկանց կեանքը. չարիքի գլխաւոր աղբիւրը սա է իսկ միւսները երկրորդական և միջնորդական դեր են կատարում։ Տարբերութիւնը երկրորդականների վերաբերմամբ լինում է միայն գործադրութեան աստիճանի և չափի մէջ։ Դարձեա՞լ ով է մեղաւորը...

Ո՞վ է մեղաւորը.—նա՛, որ դարերով կեղեքում, հալածում, բռնաբարում է։ Նա՛, որ Մուշում, Եւդոկեայում և ուրիշ տեղեր կոտորած արեց, որ բանտերը լցրեց

րել է հազարաւոր հայերով և սրանց ենթարկել անլուր տանջանքների. նա, որ կախաղաններով է զարձանում...

Ո՞վ է մեղաւորը.—նա, որ գրգռում է տաճիկ ժողովրդին հայերի դէմ, որ մօլլաների, ազնուականների, գողերի ու աւազակների բարեկամն ու խրախուսողն է, որ Նազիմ-Թահսին-Զաքի-Բահրի արիւնարուշտ, լէշակեր պաշտօնեաներ ունի...

Ո՞վ է մեղաւորը.—մեղաւորը նա է, որ հրամայում է մորթոտել երեխաներին, յղի կանանց արգանդները պատռոտել, կանանց ու տղամարդկանց խարոյկի վրայ բարձրացնել, կենդանի-կենդանի թաղել, կաշին մաշկել, մարմնի զանազան անդամները կտրտել. նա, որ Սասունը աւերակ է դարձրել, նրա գաւակները կոտորել, ցիր ու ցան արել. նա, որ հենց այժմս, Քննիչ-Յանձնախմբի աչքի առջև, ամբողջ երկիրը զինուորական շըրխթաներով է կապել, տէրրորի մատնել՝ ծածկելու, անհետացնելու իւր ոճրագործութիւնը. վերջապէս մեղաւորը նա է, որ Հայաստանը „մարդկային սպանդանոց“ է դարձրել...

Եւ այդ մեղաւորը սուլթանի կառավարութիւնն է։

Այս բոլորից յետոյ չպէտք է տարօրինակ ու այլանդակ ընդունել այդպիսի մի հարց և համարել դիպլոմատիայի կողմից մի բաւականին անտաշ, կոշտ խաղ. մի խաղ, որ վերաբերում է ամբողջ մի ժողովրդի, մի երկրի ճակատագրին։ Այդ խաղն էժան չի նստիլ դիպլոմատիային։ Հայ ժողովուրդը ցոյց կը տայ, որ իր ճակատագիրն իրենից է կախուած։ Դիպլոմատեան թող փընտրի յանցաւորը. մինչև նրա գտնիլը, հայ ժողովուրդն իր արիւնով կը ներկէ իւր հայրենիքն ընդհանուր ապստամբութիւն անելով. և այն ժամանակ մեղաւորը կը գտնի։ Բայց արդէն ուշ կը լինի... Հրդէհն արդէն բռնկուած և շատ բան այրած կը լինի...

Այն ժամանակ ո՞վ կը դառնայ մեղաւորը...

ՆԱՄԱԿ ԿԱՐԻՆԻՑ

Իրերի ներկայ դրութեան մէջ տաճկահայ ժողովրդի վիճակը չափազանց կրիտիքական է. սուլթանի կառավարութիւնը՝ որի աւանդական քաղաքականութիւնն է ծածկել լոյս աշխարհից ամեն բան, հակառակ իւր օրհասական ջանքերին, չկարողացաւ վերջապէս Եւրոպայի առջև չբարձրացնել այն վարագոյրը՝ որի ետևը, բեմի վրայ կատարուեցան այնքան արիւնալի դրամաներ։

Եւրոպական Քննիչ Յանձնաժողովը վաղուց հասել է Ռուշ և առաջ է տանում իւր խուզարկութիւնները. անկասկած քննութիւնը նրան այն հետևանքին կը հասցընի, որ Տաճկահայաստանում կատարուած դաժանութիւնների վերաբերմամբ արտասահմանեան մամուլի մէջ արձանագրուած փաստերը դեռ ևս շատ աննշան, հազիւ տասներորդ մասն են կազմում տեղի ունեցած քստմնելի իրողութիւնների։ Թիւրքաց գործերում այս օտար միջամտութիւնը առիթ է տուել բնականաբար մահմեդական ազգաբնակութեան զանազան մտածողութիւնների. ինչ որ էլ լինին դոքա՝ այնուամենայնիւ պարզ է, որ եթէ այս անգամ էլ Հայկական Հարցի վերաբերմամբ Եւրոպական դիպլոմատեան դրական և վճռական հետևանքների չհասնի, թէ սուլթանի կառավարութիւնը և թէ կոյր թիւրք ժողովուրդն այլևս արխէյինացած, պատրաստ պիտի լինին իրենց վրէժխնդրութեան բոլոր սարսափը թափել այն խեղճ հայերի գլխին, որոնք այսպէս ասած, անընդունակ գտնուեցան մի անգամ էլ խեղդել իրենց ձայնը, լռել սարսափելի հարուածների տակ և գոհ լինել „ողորմածասէր սուլթանից“, որ բարեհաճեց բարբարոսաբար մի ամբողջ աշխարհ, մի քանի տասնեակ հազար ժողովուրդ պատժել, ոչխարի պէս կոտորել, ուղիղ ճանապարհի վրայ կանգնեցնելու համար։ Ինչ ասել կուզի՝ որ առանձին միջոցներ ձեռք առնուած են արգելելու հայերին, որ սոքա ոչ մի բողոք չկարողանան ներկայացնել Քննիչ Յանձնաժողովին։ Զնայած մեծ զգուշութեան՝ երեք սասունցիներից երկուսը խոյս տալով, հազիւ ազատուեցան, իսկ մէկը ձերբակալուեց միմիայն նրա համար, որ համարձակել էր Քննիչ Յանձնաժողովին մի յիշատակագիր ներկայացնել Սասունի վերջին խժդժութիւնների մասին։ Գլուխը կորցրած կառավարութիւնը աշխատում է, ահագին փող է ծախսում, շնորհակալութեան գրեր ձեռք անցնելու համար. բարեբախտաբար ամեն տեղ արգելքների է պատահում. ժողովուրդը կարծես թէ հասկանում է այս պատմական բոպէի ահագին նշանակութիւնը և կամենում է ոչ մի կերպ մեղադրանք չհրաւիրել իւր վրայ ապագայի առջև։ Բաղէշում մի քանի իշխաններ նախամեծար են համարել փթթել բանտերում, քան կատարել վայրենի կուսակալի կամքը-ստորագրել շնորհակալութեան թուղթը։ Վերջապէս ինչպիսի հրեշ կարող է համարուել այն հայը, որը հանդիստ խղճով թոյլ տայ իրան յեղաշրջել փաստերը, մինչդեռ դոքա նոյն իսկ թիւրքաց բերանում այնքան պերճախօս են։ Ունեցէք մի կամ երկու ծանօթ այստեղի Նշանճի թափուրից՝ որը ուղարկուեց Սասունի վրայ, տաքացրէք նրանց պօղազը և տեսէք թէ ինչեր են պատմում, ինչ փայլուն գոյներով նկարագրում իրանց սխրագործութիւնները։ Քաղցած զինուորներ այժմ փողի տէր են դառել. համը բերանները մնացել է, և հենց այդ պատճառով այստեղ օր ցերեկով մարդիկ են կողոպտում։ Դէվէ-Պոյինից՝ որտեղ գտնուում են Տաճկական ամրութիւնները, անվտանգ անցնել անհնարին է. զօրքերը շրջակայ ամրոցներից ցած են իջնում և պատահած ճամբորդին՝ հային անշուշտ, կատարելապէս մերկացնելուց յետոյ՝ բաց թողնում. շատերը աւելի ծանր բաղդի

են արժանանում, նոքա ունեցածից ջոկ շատ անգամ կեանքերն էլ են տուժում. դեռ անցեալ օր Թիւրք զինուորներն այնպէս սարսափելի ծեծ էին տուել մի հայի, որը հետևեալ օրն իսկ՝ ծանր տանջանքներից մեռաւ: Դոքա չեն բաւականանում քաղաքից դուրս արած շահատակութիւններով. մի շաբաթ առաջ քաղաքիս Գէնէրձի կոչուած փողոցում բռնել էին առաւօտը վաղ եկեղեցի գնացող լուսարարին, մի լաւ ծեծել, ամեն ինչ վրայից առել, նոյն իսկ եկեղեցու բանալին:

Տուրքերը հաւաքում են ամենայն խստութեամբ. աւուր հացի կարօտ հայ արհեստաւորը, հայ գիւղացին ստիպուած է զրկուել իւր ամենակենսական անհրաժեշտ պէտքերից կառավարութեան ծակ գանձարանը լեցնելու համար: Հարկահաւաքներն էլ շարել են, պաւէր են ստացել պարտքը չվճարողին բանտարկել տալ, իսկ այդպիսիների թիւը հայերի մէջ առնուազն 1000-1500 հոգի է. բանտային շէնք էլ հարկաւոր է, թէ՞ ոչ:

Առանձնապէս անտանելի է դառել և հայ առևտրականների դրութիւնը. կանխիկ առևտուր Աստուած տայ: „Կեաւուրուն մալի հալալ տըր“ ասում են Թուրքերը և փառաւորապէս կուլ տալիս իրանց պարտքը. Տէօվլէթէ խային էրմէնիլէր բառերը այժմ աւելի յաճախ լսում են Թիւրքերի բերանից. պաշտօնական անձինք մինչև անգամ հակառակ Թիւրքական փոլիտիկային, չեն կարողանում ծածկել իրանց ատելութիւնը դէպի հայերը և արտայայտում են նոյն իսկ դատարանական սրահներում: Անցեալ օր Մահքէմէի Շէրիի բաշքեաթիպը (առաջին քարտուղարը) ինչ որ գործի պատճառով ամբաստանեալ երեք հայերի ցոյց տալով՝ դառնում է դէպի ամբաստանող Թիւրքը և մի քանի ունկընդիրների ներկայութեամբ ասում դատարանի մէջ. -„Բէն բու փոխլարա Թարաֆ մի չէքիյեօրում, օնլար էրմէնի, պիզ եէլհամտուլլահ խալամ վէ տին զարտաշի“ (ես այս ք... կո՞ղմը բռնում եմ միթէ. նոքա հայ, իսկ մենք, փա՜ռք Աստուծոյ, իսլամ և կրօնակից եղբայրներ): Այս խօսքերը ասում է արդարութեան պաշտօնեան, դատարանի մէջ... Մնացածը կարող էք ինքներդ երևակայել:

Այս շաբաթ կատարուած խուզարկութիւնից երևաց, որ սասունցի ութը առևանգած աղջիկներ իսլամացնելու համար պահում են այստեղ ինչ որ մոլլաների տանը. Թշուառ սասունցին զրկուեց իւր կեանքից էլ, գոյքից էլ, պատուից էլ... Ծողովուրդը խորը յուզուած է, նա իւր աչքերով տեսնում է ամեն ինչ և սպասում է. նորա համար լինել կամ չլինելու ժամը մօտեցել է:

Ծողովրդի չքաւորութիւնը ծայրայեղութեան է հասնում. հարիւրաւոր ընտանիքներ մնացել են մի կտոր չոր հացի կարօտ. հենց այսօր մուներտիկը աճուրդով ծախում էր 45 հայի տուն: Քաղցած մարդու աչքին տուն կերևայ:

Այս բոպէիս ստացուեց հետևեալ տեղեկութիւնը.— Քաղաքից մի ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Սօվուգչերմուկ գիւղից Պօտոս քեհի տանից մի երիտասարդ գիւղ վերադառնալիս պատահում է մի քանի Թուրք սրիկաներու, ու-նը անառակ կանանց հետ գընալիս են եղել մուհամէդի դրախտում զուարճանալու, յարձակւում են դոքա հայ երիտասարդի վրայ և սարսափելի կերպով ծեծում են. խեղճը բոլորովին ջարդուած, հազիւ հասնում է գիւղ և մեռնում 6 ժամից յետոյ:

Քննիչ Ցանձնաժողովի եւրոպական պատուիրակները եռանդով գործում են: Չնայելով այն սարսափելի տերրորին, որ կառավարութիւնը տարածել է հայ ժողովրդի մէջ, չնայելով նոյն իսկ բազմաթիւ և ամեն կողմ վխտացող Թիւրք և հայ լրտեսներին, հայերը դարձեալ յաջողել են տեղեկագիր ներկայացնել Քննիչ Ցանձնաժողովին: Սուլթանի կառավարութեան գործ դրած ջանքերը ապացուցանելու, թէ կոտորածի պատճառն իրանք հայերն են եղել, միանգամայն ապարդիւն են անցել:

ՆԱՄԱԿ ՊՕԼՍԻՑ

Բարձրագոյն գաղտնի հրաման.— Սուլթանի խելացնոր բռնապետութիւնը սարսափահար Սասնոյ կոտորածի աշխարհաղղորդ ձայնէն, գտած ընդհանուր համակրութիւնէն և շարած ազատամիտ, մարդասէր, անկաշառ եւրոպական ու ամերիկական մամլոյ, հասարակութիւններու յարուցած բարձրաձայն, ցասկոտ բողոքներէն, ընդհանուր ցոյցերէն, վարկեան մը փորձեց իր պաղարիւնութիւնը գտնել և վերահաս վտանգէն իր քայքայուած գահը փրկել և հայկական շարժումները դադրեցնել, խեղդել արմատական միջոցներով: Զար սուլթանի շողոքորթ, աւազակ, հլու ծառաները-նախարարները խորհուրդի կը հրաւիրուին. խորհուրդ խորհուրդի կը հետևի. վերջապէս Թիւրք դիպլոմատները խելքերնուն զօռ կուտան և կը վճռեն հայ յեղափոխական շարժումները արգելելու, խեղդելու համար հետևեալ արմատական միջոցները անմիջապէս ի գործ դընել. 1) զօրացնել թէ ի Պոլիս և թէ բոլոր քաղաքներու և գիւղերու հայաբնակ թաղերու մէջ ցորեկեայ և գիշերային ամենախիստ հսկողութիւններ: Այս ցորեկեայ և գիշերային հսկողութիւններով Թուրք պաշիպօզուկ բռնապետութիւնը կը յուսայ, թէ ոչ միայն պիտի արգելէ յեղափոխական գումարումները, խորհրդակցութիւնները, տեսակցութիւնները ու շարժումները, ոչ միայն պիտի ջլատէ, չեզոքացնէ մնացորդ ազատ, տկար յեղափոխականները, ոչ միայն այդ ճարպիկ, արմանք զարմանք շարժող, վերին աստիճանի նուրբ սրամիտ Թուրք դիպլոմատներու խելապատակի ծնունդ, գանգերուն շուք, պատիւ բերող դրական միջոցով պիտի արգելք ըլլան հայ յեղափոխականներուն նորէն զօրանալու, նոր շարժումներ առաջ բերելու, այլև պիտի վերջապէս յաջողին եղած սակաւաթիւ, տկարացած (իրենց կարծիքով) քօմիտէներն ու քօմիտաճիները ձերբակալել վերահաս սուլթանի շնորհիւ և վերջապէս օձը իր բնի մէջ խեղդել: Այս բարձրագոյն գաղտնի հրամանը հաղորդուեցաւ ասկէ 2 ամիս առաջ բոլոր վալիներուն, միւթէսարիֆներուն, գայմագամներուն և միւդիրներուն ի գործադրութիւն: Մեզի հասած տեղեկութիւններէն կիմանանք,

որ յիշեալ գաղտնի հրամանը ամեն ուրէք գործադրել սկսած են ամենայն ճշտութեամբ և ցորեկեայ ու գիշերային խիստ հսկողութեան ենթարկուած են հայերը։ Բայց չնայելով այս խիստ հսկողութիւններուն, տակաւին ոչ մի քօմիտէ, ոչ մի քօմիտաճի ոչ միայն չձերբակալուեցաւ, ոչ միայն շարժումները չարգելուեցան, այլև աւելի մեծ չափեր առաւ յեղափոխական պրոպագանդան, յեղափոխական ընդդիմադրական ոյժը, իսկ յեղափոխական կազմակերպութիւնները օր աւուր զօրանալու, աւելի ամրապնդելու վրայ են։ Շատ չանցած, սուլթանի բռնապետութիւնը այդ ոյժի նոր ապացոյցները պիտի տեսնէ և պիտի համոզի, որ այսուհետև բռնապետութեանը կը մնայ խոնարհուիլ մեր առջև...

Սուլթանի մեծանուն դիպլոմատներու երկրորդ և ամենազօրաւոր զէնքը ի սկզբանէ անտի եղեր է և է կաշառքը, օսմանեան լիրաները։ Գազան սուլթանը արտօներ է եպարքոսին և նախարարական խորհրդին ոչինչ չենայել կաշառելու Պոլսի եւրոպական դեսպաններուն, դեսպանական կցորդներուն, ազդեցիկ եւրոպացիներուն և եւրոպական նշանաւոր լրագիրներու խմբագիրներուն ու թղթակիցներուն։ Սուլթան Համիդը մինչև իսկ իր սեպհական գանձէն 300,000 ոսկի տուերէ այդ նպատակաւ։ Այդ խորհրդի մէջ որոշուեր է թէ Պոլիս և թէ Եւրոպա յատուկ թերթեր հիմնել և յատուկ թղթակիցներ վարձել։ Այս հրամանը ևս սկսած են ամենայն ճշտութեամբ ի գործ դնել և այդ որոշումէն տակաւին 2-3 ամիս չանցած, կըսուի թէ գանձարանը ոսկի չէ մնացեր, այնպէս որ սուլթանը հարկադրուեր է դարձեալ 100,000 ոսկի տալ սեպհական գանձարանէն։

Սուլթանի կառավարութեան բոլոր գործ դրած միջոցները՝ կաշառել Պոլսի եւրոպական դեսպանները, բացառութեամբ ամերիկեան դեսպանի, ապարդիւն անցան։ Կառավարութեան յաջողուեց 500 ոսկիով կաշառել ազգուրաց, դաւաճան հայ-կաթոլիկներու պատրիարք Ազարեանին և Ազարեանի ձեռքով Ամերիկեան դեսպան Թըրըլին՝ 25,000 ոսկով։ Փորձած են, կըսուի, կաշառել և Քննիչ Յանձնաժողովի եւրոպական ներկայացուցիչներուն և թարգմանին, բայց, կըսուի, չեն յաջողած. միայն վերջերս հաստատուեցաւ, որ թարգմանը կաշառուած է եղեր, ուստի և փոխուեցաւ։ Պոլսի դեսպանական պահանջի հիման վրայ նոր թարգման նշանակուեցաւ Կարնոյ ֆրանսիական հիւպատոսարանի թարգմանը, որը հայ-կաթոլիկ է և հայատեաց։ Շատ ցաւալի է, որ Պոլսի դեսպանները չկրցին Բ. Դռան ընդունել տալ թարգմանի պաշտօնի համար աւելի վստահելի, ազնիւ, անկաշառ անձ մը։ Յիշեալ թարգմանը արդէն յայտնի է իւր թիւրքամոլութեամբ և արդէն շատուն, տակաւին այդ պաշտօնին չկոչուած, կաշառուած է եղեր։ Մենք արդէն ոչինչ նշանակութիւն, բնաւ կարևորութիւն չենք տար քննիչ յանձնաժողովին և մենք ո՛չ միայն ոչինչ չենք սպասեր այդ ժողովէն, այլ և կը ցաւինք, որ շահասէր, եսամոլ Եւրոպան այդպիսի ձևական միջոցներով կուզէ խաբել, մոլորեցուցել հայ ժողովուրդը, յուսադրել միամիտ հայերն և իրենց միամիտ առաջնորդներն ու զուր ձգձգել հայկական խնդրի լուծումը։ Քննիչ յանձնաժողովը պարզ նախատինք մըն է եւրոպական քրիստոնեայ պետութիւններու համար և ապացոյց անոնց անքրիստոնեայ, անմարդասէր ու շահախնդրական ընթացքին։ Այս կարծիքի են նոյն իսկ եւրոպական ազնիւ, անկաշառ լրագրներն ու եւրոպական հասարակութիւնները։ Մենք միայն կամեցանք արձանագրել յիշեալ դէպքը և զգուշացնել թէ հայոց ազգը և թէ անոր վարիչ պարագլուխներն ու պաշտօնական անձերը կամ ժողովները։ Հայ ժողովուրդը թող իր յոյսը դնէ միմայն իր վրայ, մահ զգնցած Հայ յեղափոխականներու, արիւնոտ յեղափոխութեան վրայ և անոնց աջակցէ, անոնց օգնէ, անոնց պաշտպանէ, որոնք պիտի հարկադրեն թուրք բռնապետութեանը ոչ միայն խոնարհիլ հայ ժողովրդի արդարացի պահանջներու առջև, այլ և պիտի ստիպեն շահամոլ եւրոպական պետութիւններուն վերջ տալ իրենց անքրիստոնէական, անմարդասէր ընթացքին և հայկական խնդրին լուծմանը իրենց օժանդակութիւնը շնորհել։ Եւրոպական ազատամիտ, անկաշառ մամուլը և մարդասէր հասարակութիւնները մեզի հետ են, որով մենք քաջալերուած, կը շարունակենք մեր կռիւը... մի քանի հարուած ևս և սուլթանական գահը կը փշրի, կը խորտակի և մենք կըստանանք մեր ցանկալի ազատութիւնը...

Հարեմի գարշելի կեանքի մէջ սնուած, հարեմի գարշահոտութիւնով մեծցած, հարեմի վավաշոտ մթնոլորտի մէջ աճած անբարոյական սուլթան Համիդը մինչև իսկ իր սուլթանուհիները, իր հարեմի գեղուհիները, իր կիները աճուրդի հանած է հրապուրելու համար Պոլսի եւրոպական դեսպանները և անուանի, ազդեցիկ եւրոպացիները։ Թշուառական. իր թշուառ գոյութիւնը, իր քայքայուած բռնապետութիւնը պահպանելու, հայկական արդար դատը խեղդելու համար, երբ տեսաւ իր ազաջանքները, իր դիւանագիտութիւն-խորամանկութիւնը իրեն չօգնեց, պարպեց իր դանձարանը, երբ այս ալ չօգնեց, իր կիներու վրայ դրաւ իր վերջին յոյսը...

Թիւրք յեղափոխական շարժումը որքան ալ թոյլ, որքան ալ տկար ըլլայ և իր սկզբնաւորութեան մէջ, այսուամենայնիւ իր գոյութիւնը այսօր փաստ է, իրողութիւն է։

Թիւրք յեղափոխականները վերջերս Պոլսի քանի մը թաղերը սուլթանի կառավարութեան դէմ յայտարարութիւններ տարածեցին մեծ յաջողութեամբ։ Առաւօտ մը թիւրք յեղափոխականները քանի մը ծրար յայտարարութիւններ, իբրև անպէտք թուղթ, աժան գնով կը ծախեն հալաճիներու, որոնք հալայ ծախած ատեն հալան կը փաթաթեն յիշեալ յայտարարութիւններու մէջ, կը տան։ Նշան-թաղ սուլթանի հաւատարիմ շուներէն մէկը հալան կլլելէն ետքը, կը կարդայ յայտարարութիւնը. անմիջապէս ոստիկանութեանը կիմացունէ, որը կը ձերբակալէ յեղափոխական կարծած պարսիկ հալաճին։ Հարցաքննութիւնները տեղի կունենան պալատին մէջ, բայց արդիւնքը... ոչինչ։ Պարսիկ տգէտ, անգրագէտ հալաճին կը պատմէ, որ լուս-ու-մութին, երբ իր սովորութեամբ սկսաւ հալա պօռալ և ծախել, փողոցի մը մէջ մարդ մը 30 փարայով ծախեց իրեն յիշեալ թուղթերը, որոնց ինչ ըլլալը չի գիտեր,

գասը [illegible] զբաղուում՝ են նրա վիճակով, բայց՝ յուսալեան հոգեոր անհրաժեշտ պայմանները են, որովհետ

վանզի կարդալ գրել չգիտեր։ Պարսիկ քանի մը հալ-ւաճիներ տակաւին բանտարկուած կը մնան։

Ցայտարարութեան մէջ կարճ և ազդու կերպով ցոյց է տրուած Թուրքիոյ հոգեվարքը դրութիւնը, անոր մօտալուտ մահը, եթէ վերջնական դարման ձեռք չառնուի անոր փրկութեան համար։ Ցայտարարութիւնը կը վերջանայ ազդու հրաւէրով մը, որով Թուրք յեղափոխականները կը հրաւիրուին միանալ և տապալել գազան Սուլթան Համիդը, որու թագաւորութիւնը Թիւրքիոյ լայնածաւալ կայսերութեան համար աղէտներու, արհաւիրներու, կեղեքումներու և թշուառութիւններու երկար շարք մ'է եղեր...

ՀՄՇԿԱԾԱԳ

Հարստահարութիւն, ճնշում և կեղեքում իր վերջին գագաթնակէտին է հասած մեր այս թշուառ գաւառակի մէջ։ Ահա մի խիստ համառօտ պատկեր այդ անտանելի դրութեան։

Խիստ հարստահարութենէ ու թալաններէ երկիրը ամայացած, աւերակ է դառած „իշնորհս վեհ. սուլթանի"։

Ամբողջ 6 տարի է, որ կը տիրէ մեր երկրին մէջ անլուր խժդժութիւնք, սպանութիւնք և ձերբակալութիւնք. մարդ չմնաց, որ չճաշակէր այդ պտուղէն։ Թուրքեր ու քուրտեր միացած են մեր դէմ, ի բաց առեալ բռնակալութեան բարբարոս ուժերը, որ եղուեր են գարնան իսպառ ոչնչացնել հայ տարրը, եթէ յաջողի...

Բանտերը լիքն են անմեղների ստւար խմբերով։ Զբաւորութիւնը, նօթութիւնը ալ մեզ սովորական դարձեր են։ Շատ գիւղերու մէջ երկրագործութիւնը դադրած է. ժանգոտած է հայ գիւղացու գութանն ու մանգաղը։ Այս ամենու հետևանքը եղաւ անցեալ տարւայ թանկութիւնը. ալ բան չմնաց, որ ծախեն. ոչ ոչխար, ոչ կով և ոչ ալ որ և է պարէն։ Քուրտին տանք, թէ Թուրքին։ Հարկահաւաքները ամեն օր գիւղ գիւղ կը շրջին ամեն ծայրայեղութեանց դիմելով, աչքերնուն ինչ որ հանդիպի ի վաճառ կը հանեն պարտքերու դիզման և իրենց ծակ փորի յագեցման համար։

Գիւղաքաղաքէս 3 քառորդ ժամ հեռու Օձգեղ անուն գիւղը, շուրջ 30 հայ տներով, աւերակ է դարձեր. բնակիչները ամեն փախեր են։ Պողոսի անուն շէնը նոյն բաղդին է արժանացած. 3 տարիէ իվեր ոչ ոք կը բնակի. առատ ցորենի հացի ու բազմաթիւ տաւարի տէրերը այժմ ափ մի կորեկի ու կըլկլի համար կը դողան։ Կառավարութեան դրդմամբ նոյնպէս աւարի բաժին են եղած Հալթունք, Խաչտուն, Հազարի, Մուսնացի, Բազաբան և այլ գիւղեր։

Դեկտեմբերի վերջին էր, որ կոխեցին Պրիկսի գեղը, կողոպտեցին եկեղեցին և շատ տներ, վիրաւորելով մի քանի մարդ։

Դերսիմի քրտերը շարունակ իրար դէմ կուելով՝ երկիրը աւերակ կընէին։ Բարեխնամ սուլթանի կառավարութիւնը այս աշիրէթներուն մէջ հաշտարար կանգնելով և զանոնք իրար հետ հաշտեցնելով՝ իր ձեռքը գործիք կընէ հայերս անոնցմով փչացնելու համար։

Խօճա-Ուշաղի աշիրէթի երկու աւազակապետները իր ձեռքն առած է։ Ասոնք են՝ Պէքօ և Քշտիկ, որոնց համազգեստ, զէնք և հարիւրապետի աստիճան տուած է և որոնք խոստացած են իրենց Թաղար գիւղին մէջ զօրանոց մի շինել և զօրք պահել, կէսը Թուրք, կէսը քուրտ։ Գէնեթարցի Տիպը, որ իր տան մէջ հիւր եղող հայ յեղափոխականները գիշերը քնացած ատեննին կապելով՝ կառավարութեան յանձնած էր, պատանշանով և պատիւներով մեծարուելէն ետքը արձակ համարձակ կը կործանէ և կը կոտորէ հայերուն։

Երեք ամիս առաջ կառավարութիւնը գիւղ և քաղաք բոլոր տուները խուզարկելով՝ աւարի տաւ, պահուած զէնք գտնելու պատրուակաւ, ընդ այսմ ձերբակալեց 25-30 մարդ, որք տարուեցան Խօլաթի կենտրոնական բանտը, միւթասարրիֆ փաշայի առջև, իբր թէ ասոնք յեղափոխական գործիչներ են։ Բանտին խորքը ծանր շղթաներու կապանքներու տակ տնքացին, ճաացին. յետոյ ամենէն ալ 50-ական ոսկի պահանջեցին. մէկ քանիսը կրցան տուժել և ազատուիլ, իսկ մնացեալները կը հեծեն տակաւին։

Դեկտեմբերի մէջ բանտին կեանքին այլ ևս չդիմանալով՝ մեռան Երեց-Ագարակ գիւղէն հաճի Արթեն Գօլապեան, Պատանէն՝ Ստեփան Անճէմեան և Դաւթեան անձերը։ Թուրք բռնակալութիւն, ահա քեզ 3 զոհ ևս. արիւնածարաւ գազան... հայ յեղափոխականը ատով չի ընկճի...

Ուշպակ արուարձանի մէջ գիշեր մը խումբ մի Թուրքեր ծպտեալ քիւրտի զգեստով, կը մտնին Թագաւորեան Արթենին տունը, աւարի կուտան ամեն ինչ, յետոյ կըսպառնան տաք ջրով խաշել զինքը, եթէ իւր պահած ստակները իրենց չյանձնէ։ Խեղճ մարդը խմոր թխելու համար կաթսայով ջուր կը տաքցնէր նոյն ժամին. այնչափ կը ծեծեն, մինչև որ կը յաջողին իրագործել նպատակնին։ Ողորմելին մահուան տագնապի մէջ է։

Երբ կը դիմենք կառավարութեան, նա իր պաշտպանութիւնը ղլանալէ յետոյ, յիշոցներով և վախցնելով կը վռնտէ. „սուտ կը խօսիք, անհաւատներ", կըսէ. եթէ քիչ մը երկարեն, „ի բանտ", կը պոռան։ Մեր յանցանքը հայ լինելն է, ուրիշ օչինչ։

ԱՐՄՏԱՆԻ ԽՆԴՐՈՅՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

(ՆԱՄԱԿ ԵՐԶՆԿԱՅԻՑ)

I

Խնդրոյն ծագումը։ 1891 օգոստ. 25-ին Ակնաց-Լիճք գիւղացի Միւտիր Պետրոս Պուտաքեան, իրենց գիւղի պատուելի Խաչատուրին հետ տասանորդի տրոց վրայ վիճելով, կը բանտարկէ Խաչատուրը՝ „ես քեզ իբր յեղափոխական կառավարութեան պիտի յանձ-

նեմ“ ըսելով։ Այս լուրը Լիճք գիւղացիք Արխանեան մէկ. Գալուստի կը հաղորդեն, խնդրելով միջամտել Պետրոս Պուտաքեանի իւր չար նպատակէն ետ կենալ։ Արխանեան Մեծ գիւղացի Խաչատուր պատուելի Քէրէմեան, Պետրոս Պուտաքեանի ղրկելով յանձնարարական մը կուտայ։ Քէրէմեան Խաչատուր պատուելի Պուտաքեանի ներկայանալով, կը խնդրէ ի պատիւ յանձնարարչին ետ կենալ իր նպատակէն. որ և է համոզումի չանսալով՝ անդրդուելի կը մնայ, որով Արմտանցի պատուելին սպառնալեաց սկսելով՝ „ազգը քեզի պէս շատերը ջնջեց, քեզ ալ ջնջելուն վստահ եմ“ ըսելով, զէնք կը քաշէ։ Պուտաքեան անմիջապէս պոռալով, տանը մէջ պահուած ոստիկան զինուորներուն կանչելով, շուտով ձերբակալել կուտայ Արմտանցի միջնորդ Խաչատուր պատուելին։ Այս արարքը Լիճեցի պ. Աղէքսանդրը Մ. Գալուստին կիմացնէ, այս անգամ խնդրելով, որ մարդ ղրկէ, որպէսզի Ակն փոխադրած միջոցնուն ոստիկան զօրաց ձեռքէն առնուի։ Նոյնպէս նամակ մ՚ալ Բինկայ գրելով, կը ծանուցանէ, թէ Արմտայ գրած է, մարդիկ պիտի գան, իրենք ալ թող պատրաստուին, որպէսզի ձեռքերնէն առնեն։ Այս վերջի նամակը տանողը անզգուշաբար կը կորսնցնէ։ Դժբաղդաբար սոյն կորսուած նամակը Պուտաքեանի մշակը գտնելով, կը տանի Պուտաքեանի կը տայ։ Միւտիր Պուտաքեան նամակն ալ, մարդիկն ալ կը ղրկէ Ակնայ կառավարութեան։ Ակնայ կառավարութիւնը նամակին բովանդակութիւնը և հետևաբար Արմտայի մէջ Գօմիթէի մը նշմարիլը կը հեռագրէ ներքին գործոց նախարարութեան, որկէ Գուրուզայի գայմագամին հրահանգ կուգայ խուզարկել երկու Արմտանները։ Խուզարկելէ վերջ 50 ոսկի փոքր (Արմտան) գիւղից 25 ոսկի մեծ (Արմտան) գիւղից առնելով, 18-ի չափ մարդիկ բանտ կը տանի, խոստանալով, որ շուտով պիտի ազատէ։ Արդարև, շնորհիւ կաշառքին, քանի մը օր վերջ բոլորն ալ կարձակէ։

Վերոյ գրեալ արձակումէն 3 օր վերջ Արմտանցի Թուրքերէն Էմէր անուն մէկին գիշերանց տանիքին վերայ պրուիլը կնոջ ճնշուտուքէն գիւղացիք կիմանան և կը լեցին ոճրին վայրը, ջրով կը մարեն զայն և կը տեսնեն, որ մեռած է. գիշերը տեղոյն միւտիրը կառավարութեան լուր տանելով, կը դառնայ Քէշֆի։ Կառավարութեան գիւղ եկած պահուն ոճրագործը՝ Նախուրեան Սարգիս, զինեալ՝ խոյս կուտայ. պաշտօնեայք փախչիլը կը տեսնեն ու հետամուտ չեն ըլլար ձերբակալել։ Սպնեալն դրացիներէն իբր կասկածելի 12-ի չափ մարդիկ ձերբակալելով՝ կը փոխադրեն բանտը։ Խնդիրը Երիզա հեռագրելով, դիաղննութեան համար բժիշկ մը կուգեն. բժիշկը գնալով, 7 օրուան մեռածը գերեզմանէն կը հանէ, կը զննէ և խեղդուած ու ապա քարիւղով այրուած ըլլալը բարբր կընէ։ Փախչող Սարգիսը ամեն օր Էմէրի բարեկամները տեսնելով, կըսէր՝ „Էմէրը ես կապարով զարկի սպանեցի, բժշկին աչքը կոյր էր, որ կապարը չգտաւ ու խեղդուած ըսաւ սպանեցի, որպէսզի կնիկը առնեմ“, և արդարև, ամեն գիշեր կուգայ Էմէրի կնոջ հետ կը տեսնուի եղեր։ Կառավարութիւնը կը լսէ և փոխանակ Սարգիսը բռնելու, ճնշումներ, խստութիւններ ի գործ կը դնէ ժողովրդեան վրայ, որպէսզի կեղեքէ։ Եւ արդարև 1-2 մարդ տանելով, կաշառ կառնեն ու կարձակեն։ 12-ը իբր ոճրագործ միշտ բանտը կը պահէ... Ոճրէն 2 ամիս վերջ եղեռնագործ Սարգիս Զիմասա գիւղը ոճիր մը գործելու աշխատած միջոցին սխալմամբ իր ընկերէն կը զարնուի, կառավարութեան և գիւղացոց կողմէ պաշարելով, կը բռնուի, կը տարուի դէպի Տիվրիկ, ուր կը մեռնի բանտին մէջ։ Այս միջոցին Պոլսէն Արմտա կուգայ նախորդ միւտիր Մ. Գէորգ Պճոյեանը, շահասէր, վատ, ցածահոգի, սև սիրտ մէկը, ինչպէս գրեթէ բոլոր հայ միւտիրները։ Սա 12 տարի առաջ դարձեալ այսպիսի ոճրով մը միւտիր, էր 4-500 ոսկի կորզած է։ Գիւղ գալուն պէս, բոլոր խալամները և, իր նման հայերը կը հաւաքէ գլխուն՝ ես Պոլիս ըսելեցիս ոճիրը կոմիտէն է գործեր, կըսէ.ուստի նախ աշխատինք զանոնք գտնել ու անոնց գլուխները ճզմել։ Արդէն ոճրագործը իրենք են. կը յայտնի։ Վերջապէս 8-10 խալամ և 4-5 հայեր բոլորուելով, խնդիրը փափագած աստիճանին կը հասցնեն։ Անոնց, որք հայ ըլլալով հանդերձ, մատնութեան նախապատճառ եղած են, անունները մի առ մի պիտ գրեմ։ Մ. Գէորգ այս մարդոց բերնէն կառավարութեան իմաց կուտայ, թէ 12 մարդ ևս բանտ գտնուողներուն հետ հաւաքելով, սպանած են Էմէրը՝ ընկերութիւնը լրտեսելուն համար։ Խնդիրը Երիզայի ընդհանուր դատախազի օգնականին հեռագրելով՝ Գուրուչա կուգեն։ Յիշեալ օգնական դատախազն Գուրուչայ գալով և ամբողջ 3 օր Գէորգի հետ բանակցելէ վերջ՝ զայն միւտիր կանուանէ վերստին և հետը գիւղը երթալով՝ կրկին քննութեան կը ձեռնարկէ։ Ցետ քննութեան, նոր զրպարտեալ 12-ն ալ բանտարկելով՝ Գէորգի հետ կը խորհրդակցին խնդրոյն քաղաքական գոյն տալու մէքենայութեանց վրայ և 24 մարդ, իբր Էմէրի ոճրագործ, Երիզա կը փոխադրեն։ Ընդհանուր դատախազի օգնականը Երիզա գնալէն վերջ, միւտիր Գէորգը իւր դաւերն կսկսի ի գործ դնել և իր թելադրութեամբ, իբր ոճրագործ բանտարկեալ՝ կէնճեան Նշանը ամբաստանութիւններ կընէ Մ. Գալուստի համար՝ թէ յեղափոխականաց նախագահ, Արաբկերի ու Ակնոյ ընկերութեանց վարչապետ և իր տրամադրութեան տակ գտնուող ընկերութեան ամեն պէտքերը հոգացող է։ Այս ամբաստանութիւնը հիմն բռնելով՝ Արխանեանի տունը կը խուզարկեն։ Արխանեան խոյս կուտայ։ Երիզա հեռագրելով՝ թէ ընդհանուր դատախազի օգնական Բէմզին կուգեն և թէ Մ. Գալուստ Արխանեանը ձերբակալելու համար գումարտակ մի զրկեն։ Զօրքերն ղրկելով, Բէմզին ալ կերթայ Ծուրուցայ և կըսկսի այս անգամ ուղղակի կոմիթէ փնտռել։ Գլպիչեան Նշանաւոր մատնիչը Բէմզիին լուր կուտայ, թէ Եսիկեան Նշան ընկերութեան համար վառօդ ու կապար կը բերէ. Նշանը քննութեան ենթարկուելով, բան մը չյայտնելուն, զօրքերու վրանը կուղարկի ծեծելու համար։ Նշանի երեսը ռուբ (պէքմէզ) քսելով, ձեռքերն ու ոտքերն կապելով, ամբողջ 2 օր կիզիչ արևու տակ կայնեցնելով, քննութեան կը տանին, ուր, այս տանջանքների սարսափէն, կը յայտնէ թէ՝ Դոքտոր Փաշայեան է-

գասը չ՚, որ դրանք գրաչուում են նրա վրձակով, բայց և յուրեան հատուր անդրադարձ պայմանագրեալ, որոնք

ֆէնտի Գարահիսարէն 50 քաշ վառօդ և կապան ղրկեց Մ. Գալուստին։ Այս յայտնութեան վրայ 1 մէճիտ պարգև կը տրուի մատնիչ Ազարեայի իբր վարձատրութիւն։ Ահա վատ մը, որ Յուդայի չափ ալ վարձք չկրցաւ առնել։ Այս պարգևին վրայ Ազարիա ալ աւելի շահագրգռելով՝ շատ մը զրպարտութիւններ ևս կընէ։ Այս մատնութեան զոհերէն որն որ չի խոստովանիր իրեն վերագրածը, կը ղրկի զօրաց վրանը, ուր ծեծը, խոզամահակը (տժուզ թօփի) կըսպասէ խեղճին. շատ անգամ ալ ըմբոստը վրանի բլուրէն զառիվայր կը գըլորեն։ Ահա կառավարութեան օրինական քննութեան արարողութիւնը, որ իր ճշմարիտ գազանական նկարագիրը ցոյց կուտայ։ Այս կարգի անլուր ճնշումներով ու տանջանքներով կը չարչարեն բանտարկեալները, որոցմէ 3-ը՝ Մկրտիչ, Ղարամրեան և Ղազար Կիրակոսեան կը մեռնին բանտին մէջ, քթերէն ու բերներէն արիւն հոսելով։

Ամիսներով անկողին կը մնան հետևեալները. Գէորգ Էլպէկեան, Մ. Համբարձում Մանկիկեան, Կարապետ Հայթայեան և ուրիշները։

Այս բարբարոսական արարողութենէ վերջ 12 անձ ևս ձերբակալելով և գիւղին ամբողջ զէնքերն ու վառօդը հաւաքելով՝ կը փոխադրեն Երիզա, իբր վնասակար և արգելեալ ցուցնելու համար։ Յիշեալ 12-էն զատ շատեր քննութեան ենթարկած և տանջելով՝ պահանջած ստակնին առած ու արձակած են։

Օգնական Բէմզին և միտիր Գէորգը 2 գիւղի ունևոր դասակարգէն մարդիկ հաւաքած ու առաջարկած են 10 մարտինի հրացան գնել թուրքիոնճի լազերէն և տեղ մը պահելով՝ պաշտօնապէս ցոյց տալ իբր ընկերութեան պահած զէնքեր, որուն Տ. Պողոս Փոքր գիւղի և Տէր Յակոբ՝ Մեծ գիւղի քահանաները չհաճելով՝ կը հերքեն։ Այս եղելութեան առթիւ ամբաստանեալք վկաներ ցցուցած են, բայց կառավարութիւն ուշագրաւ եղած չէ, իր սիրելի պաշտօնէին մեքենայութիւնները երևան գալը չուզելով։

Զօրաց ժողովուրդին վրայ ըրած ճնշումը և հարիւրապետին հարստահարութիւնը։

Մ. Գալուստ Արխանեանը ձեռք բերելու պատրուակով՝ հարիւրապետը հրման կուտայ զինուորներուն այգիները երթալ, աշխատող հարսներն ու աղջիկները նեղել, պատիւնին անարգել, ծառերը կտրել, խաղողի թուփերը վառել, տունները մտնել քննելու, բայց կողոպտելով դուրս ելնել, բռնի կանանց հանդերձի սընդուկները բանալ տալով՝ Մ. Գալուստը փնտռել։ Ձեր գործը այն պիտի ըլլայ, ըսելով, հալածել տնեցիները, մինչև որ ստիպուին 10-20 ոսկի տալով, դուրս հանել։ Միտիր Գէորգը ժողովուրդին այս կրած զրկանքէն ու հալածուելէն օգտուելու դիտաւորութեամբ ամբողջ 100 ոսկի կառնէ 2 գիւղերէն, հարիւրապետին տալով, այս հարստահարութիւնները դադրեցնելու համար. միւս կողմէն տեղական կառավարութիւնն ալ գործելէ չի դադրիր, օրը 2-3 մարդ բանտ տանելով՝ „Մ. Գալուստին հետ տեսնուերես, տեղը գիտես“, պատրուակելով, զօրաց վրանը կը ղրկէ ծեծելու համար, մինչև որ քանի մը ոսկի կորզէ։

Ժողովուրդը ճարահատեալ Երիզա բողոքարկուներ կը ղրկէ հարկ եղած տեղը բողոքելու համար. թաղական խորհրդոյ կնքով և 30-ի չափ ստորագրութեամբ, 680 ոսկւոյ առնուած կաշառքներու ցանկ մ'ալ շինելով՝ միտիր Գէորգին, տեղական կառավարութեան, զօրաց և հարիւրապետին ըրած բարբարոսական ճնշումներն ալ կէտ առ կէտ բացատրելով։

Տրուած բողոքներն Երիզայի օգնական դատախազի նը-կատողութեան կը յանձնուին, որ արդէն ինքն ալ խորհրդատու և առնուած կաշառքներուն կիսաբար էր. բողոքարկուները կը բանտարկէ, սպառնալով, թէ մինչև որ այս բողոքները ջրելու համար աղերսագիր մը չտաք, բանտը պիտի մնաք։

Առաջնորդ Վարդան վարդապետը հրահանգեց մեզ, թէ կառավարութեան բողոքեցէք. ձեզ չպիտի արձակեմ։ Բնականաբար պահանջածը չկատարուիր և ճարպիկ պաշտօնեան սպառնալիքը կը գործադրէ. ո՞վ է փնտռողը, ո՞վ է հարցնողը խեղճ հայոց վիճակը, քաշած անիրաւ զրկանքները, տառապանքները. սուլթանի կառավարութիւնը... իր հայոց նկատմամբ ունեցած բարեսրտութիւնը հանրածանօթ է։ Բէմզիներ ազատ համարձակ կը կթեն ու կը տանջեն արդարութիւն փնտռող խեղճ ժողովուրդը։

Այս միջոցին Ակնէն ու Արաբկիրէն վաշտ մը հեծելազօրք կուգայ Մ. Գալուստ Արխանեանի ձերբակալման օգնելու և ճանապարհին Մ. Գալուստի հետ կռուի բռնուելով՝ բաւական ժամանակ հրացանաձգութիւն կընեն և Մ. Գալուստ կը յաջողի փախչիլ. ասոր վրայ կատղելով՝ տանը վրայ կը յարձակին, եղած չեղած կը կողոպտեն։ Դարձեալ կռուի կը բռնուին Գալուստի հետ, այս անգամ Արխանեանի ընկերներէն մին ձեռք կիյնայ, սակայն Արխանեան, 10 ժամ դիմադրելէ վերջ՝ խոյս կուտայ. զինուորները վրէժնին լուծելու համար կրկին տան վրայ կը յարձակին, զի արդէն նպատակնին, գործերնին կողոպտել է, այսպէս առիթներու կը սպասեն անյաղթ թշնամիէն կրած պարտութեան ոխերնին ժողովրդէն հանելու համար և կողոպուտի ձեռնարկելու. զինուորներու երկու անգամ տնէն ըրած կողոպուտը 1500 ոսկի կը հաշուի. ինչ հիանալի պաշար, որս անօթի գազաններուն։ Երկու գիւղերու նիւթապէս վնասը մօտ 4000 ոսկիի կը հասնի, թող բարոյական անչափ կորուստները. ժողովուրդը ամեն կողմէ ճարահատ պատրիարքարան կը դիմէ՝ դարման սպասելով սևերես Աշըգեանէ, որ կարևորութիւն չի տար. բաղդին բերմամբ ձըմեռը շուտ վրայ գալով՝ զինուորները ետ կը կանչուին. իսկ կառավարութիւն ու Մ. Գէորգ մինչև ցարդ կը շարունակին իրենց կեղեքումները։ Այսօր Արմտանի մէջ մէկը չկայ, որ 5-6 անգամ բանդարկուած ու կաշառ տուած չըլլայ։

—Բէմզիին Երիզայի բանտարկելոց ըրած ճնշումը։

Բէմզին ահարկու և բիրտ խստութեամբ Երիզա գըտնուող բանտարկեալները կսկսի քննել. իր սպառնալիքներէն վախցող ու մատնութիւն ընողները միայն 3 են. Կարապետ Գլճեան, Թօփալ Վարդան, Գէորգ Մուրա-

տեան, որոնք այսօր մեռած են։ Բացի Թօփալ Վարդանէ, վերջի 12 բանտարկեալները, երբ Երիզա կը բերուին, կառավարութեան իրենց վրայ ի գործ դրած զեղծմանց, ծեծերուն, տանջանաց դէմ բողոքելով, եղած քննութեանց ապօրէն ըլլալը կը յայտարարին։

Բէմզին՝ այս բանէն կատղելով, շատ հայհոյանքներ, սպառնալիքներ կընէ՝ „տօքթ. Փաշայեանը ձեզ հրահանգեց, որ կառավարութեան դէմ բողոքէք“ ըսելով։ Նոյն իսկ տօքթ. Փաշայեանի վրայ ալ խիստ ճնշումներ ու սպառնալիքներ բանեցուցած ու տօքթորին տուած յանդուգն, բայց օրինական պատասխաններէն այնչափ փըրփրած է, որ քննութեանց թղթերու տակ իր կողմէն նշանաւոր շէհր (բացատրութիւն) մը տուած է տօքթ. Փաշայեանի մասին՝ թէ „երեք տարիէն աւելի անընդհատ Արմտայի ընկ. կազմակերպութեանը և զօրութեանը աշխատեր է“ և ասկէ ալ չը գոհանալով, ոտքին ալ շղթայ կը զարնէ։

Կ. Պոլսի մէջ ձերբակալուող և Գուրուչայ քընուող Եղիա Էլպէկեանի մատնութիւնը։

Կոմիտէին վերաբերող ամբողջ ամբաստանութիւնները այս անձին տան մէջ կատարած է. սա քննութեան մէջ ինքնիրեն կսկսի յերիւրել յեղափոխական խնդիրներ, ուրիշներու ըսածներուն հաստատութիւն տալ և այնչափ կը մեծցնէ իր զրպարտութիւնները, որ առասպելի կը մօտենան. իր ամբաստանութիւնները կը բերէ տօքտորին ու Մ. Գալուստին վրայ կը հիմնէ. այս մատնութիւնները լոկ տունը երթալու և իւր գազանական հաճոյքը յագեցնելու համար է ըրած. ահա նշանաւոր վատ մը, որ վարկենական հաճոյքի մը համար խիղճ կընէ 50 մարդու վրայ սոսկալի զրպարտութիւնք ընել և հաստատել։

Մ. Գալուստին ձերբակալումը.

Մ. Գալուստ ամբողջ տարի մը փախստական պտտելէ և քանի մը անգամ կուի մտնելէ վերջ, Զերմա անուն քարայրի մը մէջ կը պաշարի բազմաթիւ ոստիկան զինուորներէ և 400-ի չափ թիւրք խուժանէն։ 3 օր անընդհատ կուելով և դիմադրելով, անօթի ծարաւ կը տոկայ իր վրայ տեղացող կապարներուն ու անհաւասար զօրութեան։ Երրորդ ցերեկը ընկերներէն մին կկտնայ, մէկ ընկերն ալ թեւէն կը վիրաւորի, ուրկէ թշնամիները կօգտուին և քարայրի մէջ մնացածներն ալ ձեռք ձգելու կը ձեռնարկին։ Տ. Յակոբ քահանան ու Մ. Գալուստի մայրը միջնորդ կը ղրկեն Գալուստին զինաթափ ընելու համար. անվեհեր Գալուստ անօթութենէ պարտած և ուժի չգոյութիւնէն կը բռնադատի անձնատուր ըլլալ։ Իր ընկեր Խորէն ևս կը յանձնի և Հասան չաւուշի կողմէ կը սպանի։

ԿՐՕՆԸ ԴԻՄԱԿ Է

Սուլթանի կառավարութիւնը չի բաւականանում միայն իւր երկրում գտնուող մահմեդականներին գրգռելով հայերի դէմ։ Նոյն կրօնական դիմակի տակ նա դրդել է և Անգլիայում բնակուող մահմեդականներին, որոնք միտինգներ կազմելով՝ բողոքել են անգլիական կառավարութեան ընթացքի դէմ „յանուն մահմեդականութեան“։ Պ. Մ. Զերազը Էդինբուրգում արտասանած իր մի ճառով պատասխանում է նրանց և պարզ յայտնելով, թէ հայկական շարժումն ամենևին կրօնական բնաւորութիւն չունի, թէ հայերը չեն յարձակւում տաճիկների, քրդերի, չերքեզների վրայ իբր մահմեդականների, որոնք ոչ պակաս ճնշուած են կառավարչական պաշտօնեաներից, բերում է ի միջի այլոց հետևեալ հետաքրքիր փաստը.—

„Մուստաֆա փաշան դաշն է կապել Իսմայիլ բէյի հետ թայի(°) ցեղը ընկնելու համար։ Նոքա մղել են նրա վրայ կանոնաւոր զօրքեր, որոնք նրանց հրամանով բռնաբարել են կանանց եւ կոտորել տղամարդկանց։ Մուստաֆա փաշան հրամայել է պատրաստել մի մեծ խարոյկ եւ այրել Բերվարի քիւրդ ազուական Բագուկի հօրեղբօր որդուն։ Ինքն էլ չիրուխը բերանին կանգնած՝ դարձացել է այս սոսկալի տեսարանով։ Այդ հրէշը պատժից ազատ մնալու համար ծծում է քիւրդ գիւղացիների արիւնը եւ իւրաքանչիւր տարի 6000 օսմանեան ոսկի Երզնկայի տաճիկ պաշտօնեաներին է ուղարկում նրանց կաշառելու համար... Ինչպէս ամեն մի հայ, այնպէս էլ ամեն մի քիւրդ զգում է, որ իր կեանքը վտանգի մէջ է եւ իր ապահովութիւնը որոնում է պանդխտութեան մէջ։ Բազմաթիւ քիւրդ գիւղերում կարելի է պատահել կիսամերկ, քաղցից մեռնող, կըմախք դարձած կանանց եւ երեխայոց՝ որոնց իսկական տեղը եթէ ոչ հանգստարանը՝ հիւանդանոցը պէտք է լինի“։

ԱՐՁՔ ՕՐՀԱՍԱԿԱՆՔ ՀԱՅՐԱԳՈՅՆՍ ԿՈՒԻՆ

«Հնչակը» մեր պահանջի ճնշման տակ վերջապէս բարեհաճեց ի կատար ածել մեր մասին «իր ուրիշ բաներ յայտնելը, այլ եւս ուրիշ կերպ վարելը», առաջ բերելով այն «փաստը», որի հիման վրայ որոտալով սպառնալիքներ էր կարդում մեզ եւ մեղադրում «գրական գողութեան» մէջ։ Ահա «Հնչակի» «փաստը»(°°՝), որը նոյնութեամբ առաջ ենք բերում։

«Պէտք է լաւ գիտնալ, որ առանց իմ թոյլտուութեան երկու անգամ (միայն երկու անգամ. չէ որ պ. Խմբագրապետը ասում է՝ Մուշի եւ Սասունի „մի քանի“ թղթակցութիւնները) ղըրկածս տեղեկութիւնները արտագրելով գրկած են այդ՝ «Դրօշակի» եւ այլ խմբագրութեանց... (°) Գրեցի, որ եթէ այդպէս լինի այլ եւս ո՛չ մէկուն չը պիտի տեղեկութիւններ «հաղորդեմ», (ուրեմն հնչակեան Մուրատը տեղեկութիւններ էր հաղորդում դաշնակցականներին. ինչու, ի՞նչ կապ կար. պ. Հրապարակախօսը (°՝) այդ մասին համեստութեամբ լռութիւն է պահպանում) այլ ուղղակի խմբագրութիւն՝ «Հնչակի», պիտի ուղարկեմ, (ինչու հենց սկզբից չէր ուղարկում կամ թէ չէ „գողութիւնը“ տեղի ունենալուց յետոյ ինչու շղաղարեցրեց տեղեկութիւններ հաղորդելը) ուր տպելէն վերջ ամենքը կը կարդան։ Սակայն որոշ կարելի է ասել այսպէս որ ես բերանացի իրաւունք տուած եմ (պ. Խմբագրապետն ասում է վերցրել են իրը) ՄԻՍՅՆ ԿԱՐԴԱԼՈՒ եւ «Հնչ.» խմբագրութիւն ղըրկելու, իսկ անո՞նք...ես այդ անպատեհութիւնները արդէն դուշակելով գրած էի...»

Ահա «Հնչակի» «փաստը, դօկումէնտը», որ, ինչպէս ինքն է ասում, քաղում է Մուրատի ամենավերջին նամակների մէկից։ Թող ների մեզ, որ մենք այդ նամակը չենք կարող ընդունել հարազատ, իսկական, նա այն աստիճան անհեթեթ, կարկտած եւ հակասական է։ Այդ նամակ հնա-

գասը չէ, որ դրանք գրաղում են նրա վիճակով, բայց [illegible] հատարանշում պրոյեկտոր եւ, որպէս-

ղողը այնքան խղճուկ խելքի տէր է, թէեւ Խմբագրապետ - Հրապարակախօս (փիշտ), որ աչք ծակող կեղծիքը անգամ չի նկատում։ Խե՜ղճ Խմբ.-Հրապարակ., գոնէ զգուշացէք, որ ձեր սեփական կոտրած ողորմելի գրիչը ձեր աչքը չհանէ։ Ի՞նչպէս, դուք ասում էք, որ դաշնակցականները իրենց «յատուկ յատկութեամբ» հնչակեան ներկայանալով (°°՛) խաբել են ձեր թղթակիցներին, իսկ մի քանի տող ցած ձեր առաջ բերած խօսքերից երեւում է, որ թղթակցութիւնները հաղորդում էին ոչ «հնչակեան ձեւացող» դաշնակցականներին, «միայն կարդալու համար»։ ուրեմն ստում էի՛ք, որ դաշնակցականները հնչակեան էին ձեւանում։ այսպիսի ստահոտ, ինքնահաւան տրղայամտութիւն միայն կարելի է սպասել «Հնչ.» Խմբագրապետ հրապարակախօսից։

Ենթադրենք նոյն իսկ, մի րոպէ, որ Մուրատին վերագրած խօսքերը ճիշտ են։ (Ընթերցողը կը տեսնէ մի քիչ յետոյ, որ մենք աւելի քան իրաւունք ունէինք կասկածելու։ առ այժմ մենք գործ ունինք միայն «Հնչ.» «Հնչանաւոր» «փաստացի պատասխանի» հետ։)—Ի՞նչ մտերմական սիրալիր յարաբերութիւն հնչակեան թղթակիցների կողմից, չէ՞, ցանկանալ, որ միայն «Հնչ» յատկացրած թղթակցութիւնները նախ Դաշնակցական կուսակցութեան անդամները կարդան։ Բայց այնու ամենայնիւ մեզ համար հանելուկ է մնում այն, (մանաւանդ ի նկատի ունենալով «Հնչ. կենտրոնի» արձակած շրջաբերականները, հրամանները, տնաթէմները... Ամերիկայի իւր հետեւողներին), թէ ի՞նչպէս հնչակեան կուսակցութեան Մեծ Կենտրոնը, որ ամենաողորմածաբար մեզ իւր թշնամիների ցուցակն է անցկացրել, իւր հսկայական ուսերի վրայ մի ամբողջ տարուց աւել տարել է «հնչակեան եղբայրների», իւր թղթակիցների այդ տեսակ ըմբռստ, «անդիսցիպլին» ընթացքը։ Իսկ թէ Մուրատը իւր յօժար կամքով հաղորդում էր իւր թղթակցութիւնները դաշնակցականներին «միայն կարդալու համար», չէ՞ որ այդ աստիճան մտերմութիւնը ցոյց է տալիս սերտ յարաբերութիւններ, որ անշուշտ միայն հասարակ կոմպլիմէնտներում չէին կայանում, այլ համերաշխ գործունէութեան, փոխադարձ աջակցութեան մէջ։ Ինչո՞ւ «Հնչակը», որ սորանից մի քիչ առաջ յայտարարում էր, թէ հնչակեանները ո՛չ մի յարաբերութիւն չունին դաշնակցականների հետ, չի բացատրում, թէ ինչումն էին կայանում այդ յարաբերութիւնները եւ ինչպէս պատահեց, որ իւր թղթակցութիւնները կանոնաւոր նախ գրում էին «իսկ անո՞նք»ներին կարդալու համար... Անբացատրելի գաղտնի՛ք է դա «Հնչ.» հոդեւիւանդ Խմբագրապետի համար, որ իրեն մի կենտրոն է երեւակայում, որի շուրջը պտտում է հայկական շարժումը, բայց շատ բնական է բուն գործիչների համար, որոնք ընթանում են կուի դաշտում ձեռք ձեռքի տուած, մի կողմ թողնելով կուսակցականութիւնը գործնական ասպարէզում։

Անձնական ինչ ինչ միտումներով կուրացած Խմբագրապե՛տ-Հրապարակախո՛սը առաջ բերելով «իր փաստը»՝ Մուրատին վերագրած խօսքերը, դիտմամբ մոռանում է մի բան, այն է՝ որ Մուրատը «Սալ» ստորագրութեամբ աւելի պակաս թղթակցութիւն է գրել, քան Մուրատի մտերիմ ընկեր եւ գործակից «Դժոխքը»։ Երբ Մուրատը արդէն դահճի ձեռքին է եւ մատնուած լռութեան, գուցէ յաւիտենական, Խմբագրապետի համար դժուար չէ ամեն իւր ուզածը նրան վերագրել, նրա անունից հեզիտական խորամանկութեամբ թքով խօսքեր կապել, որպէս զի կարողանայ ուրիշների աչքում թոզ փչել։ բայց ինչո՞ւ հասարակաց դատին չկանչել «Դժոխքին», որ վկայ է .. „Հնչակն“ եզիպտի յատկութեամբ այդ չի կարող անել, որովհետեւ «Դժոխքը» կենդանի է ու ազատ եւ ամեն ստահոս-բամբասողի բերանը իսկոյն կը փակէ։ բայց մենք ստիպուած ենք այդ անել, որպէսզի այն ցեխը, որ Խմբ. Հրապարակախօսը ուզում էր դաշնակցականների երեսովը սալ, գնայ իր բերանը ցեխէ։

Ահա թէ ինչ է գրում „Դժոխքը“ մեր ընկերներից մէկին թղթակցութիւնների հարցին վերաբերեալ։ *)

„Մեք իբր ժողովրդի զաւակ, և ծանօթ նրա բնա-
„ւորութեան, հոգւոյ տրամադրութեան, և վերջին չորս
„տարիների ընթացքում եղած գործունէութեան, կա-
„տարելապէս համոզուեցանք և հարիւրաւոր ապացոյց-
„ներով տեսանք որ կուսակցութիւններն եղան ժողովր-
„դի հիմը քանդող, քան օգուտ մը տուող։ Արդեօք
„ամօթ չէր հայ յեղափոխական գործիչներուն, որ հա-
„կառակ Մշոյ և Սասնոյ վերջին չորս տարուայ նօթի՝
„անզէն լինելու գոռումին ու գոչումին, իրենց ականջ-
„ները փակեցին, թէև վերջնականապէս Հայի վիճակն
„այդպէս (արիւնով) պիտի լինէր, բայց գէթ պիտի կո-
„տորուէր, կոտորելով, պիտի սպանուէր սպանելով, և
„փոխանակ յամօթ և 'ի նախատինս Հայութեան, Հա-
„յաստանի պարծանք եղող Սասուն մը և Տարոն մը
„սովէն և զէն ու ռազմամթերք չունենալէն, մի ամիս
„հազիւ դիմանալով կորսուելէն ու փլատակաց տակ
„ծածկուելէն, գէթ պիտի դիմանար մի քանի ամիսներ
„աւելի, և Յեղափոխութիւնը այդ տեւողութեամբ ըն-
„դարձակ ծաւալ ստանալով բոլորովին չը պիտի քան-
„դուէր, ողջ ողջ հորերու մէջ չը պիտի թաղուէր այդ
„բիւրաւոր անմեղ մանկունքն ու կոյս աղջկունքը։ Ժո-
„ղովրդի այդ անտանելի կացութիւնն աչքի առաջ ու-
„նենալովն էր, որ մեր Սիրելի և Սրտակից Մուրատը
„գրեթէ արտասուալից աչօք միշտ կը գրէր և կա-
„ղաչէր Հայ գործիչների օգնութիւնն ու ձեռնտուու-
„թիւնն. վերջապէս այդ կուսակցութիւններն այնպիսի
„վէրք մը բացած են մեր սրտին՝ որ ց'մահ անմոռա-
„նալի է մեզ։ Ներկայ հանգամանքներում ինչպիսինը
„մենք՝ Հայերս ենք գտնուում, անխղճութիւն և մինչ
„անգամ դաւաճանութիւն չէ՞ արդեօք, որ դեռ այդ
„կուսակցութիւններն բաժան կը գործեն. այդ ընթաց-
„քը անշուշտ մեզ դիտել կ'ուտայ, որ ե սակ ան փառ-
„քի յետեւից ընկած, անձնական կրքերից կ'ուրացած
„ջլատում են ոյժերը, քան զօրացնում, մոռացած են
„ժողովրդի տառապանքը և իրենց փառաբանութեան
„համար են ծառայեցնում գործը։ Ի՞նչ է Ներկայաց-
„նում մեր բոլոր ոյժը՝ այն մեծ ոյժի առաջ, որի դէմ՝

*) Ցնայած, որ մենք չենք քաջանում „Դժոխքի“ կարծիքը կուսակցութիւնների վերաբերմամբ, այնուամենայնիւ առաջ ենք ընդում այդ կտորը ամբողջութեամբ, պահպանելով նրա ուղղագրութիւնը՝ բառ առ բառ, կէտ առ կէտ։

Յայտնի պատճառներից դրդուած, այս նամակի այն կտորը, որ վերաբերում է թղթակցութիւնների խնդրին, հեղինակի ձեռագրի ֆոտոտիպիայով տալ չենք կարող. միայն նրա եւ ստորագրութեան լուսանկարը ուղարկում ենք ապահովացրած նամակով „Հնչակի“ խմբագրութեան։

„կռուելու ենք, մի կաթիլ ջուր՝ ահագին գետի մէջ, „և դեռ կ'գտնուին այնպիսի անբարոյականներ որ ան„խղճաբար այդ կաթիլն էլ կուզեն ջլատիլ. կուսակ„ցական կրքերով իրարու դէմ մղել, փոխանակ միա„ցած ընդհանուր թշնամուն դիմադրելու...

„Մենք համոզուած ենք որ դա է մեր տան քանդողը. „դա է մեր աչքի գերանն, քանի որ Հայաստանում „արիւն կը հոսի, և մօտ ու ազգակից մարդկանց, և դեռ „իրենք հեռի այդ ժողովրդի թշուառութիւններից ու „անտանելի տանջանքներից, իրարու գլուխ կը կրծին, „ուրեմն մեզ ժողովրդից կը մնայ՝ դրան ջնջել և կամ „ժողովրդի ներկայ վիճակի և իղձերի համաձայն ժո„ղովուրդ դարձնել: Ահա կը լսենայ, չորս տարին որ „Պ. Միհրան Տամատեանի և Համբարձում Պոյաճեանի „(Մուրատի) հետ գիտակից եղած եմ ժողովրդի պա„հանջներին. ցաւերին ու տանջանքներին, և մեր կա„շիի վրայ զգացած եմ այն բոլոր թշուառութիւնքն „որով ժողովուրդը իւր օրհասական ժամուն հասած „էր: Ի նկատի ունենալով ժողովրդի անհրաժեշտ պա„հանջներն, նոյն իսկ այդ գործիչներն զգուանք յայտ„նելով այդ կուսակցական բաժանումներէ, կը ջանային „և մինչ անգամ իրենց կեանքեր ևս զոհ տուին ժո„ղովրդի շահերի համեմատ: Թունդ կուսակցական մը „տեսնելով՝ և իւր կաշիի վրայ զգալով այդ թշուառ „ժողովրդի, թշուառ դրութիւնը, անմիջապէս կուսակ„ցական հոգի է կը հեռանար, և իւր մտածմանց ա„ռաջին կէտն կը դառնար, ժողովուրդը և նորա շա„հեր: Ժողովրդի շահերն ուր կը պահանջէն „դիմել՝ անդ կը դիմէին. և ուղղակի այդ նը„պատակաւ էր որ Պ. Մուրատը շտապեց 'ի „Կովկաս անցնել, ժողովրդի անհրաժեշտ պա„հանջներին գոհացում մը տալու համար. այդ „նպատակաւ էր որ իւր յօդուածները ու „տեղեկագրերը կը ղրկէր թէ Հ-ի և թէ Դ-ի „թերթերուն, ժողովրդի ցաւերը ու տանջանք„ները, նամանաւանդ նոցա թշուառ աղաղակ„ները շատ թուով մարդկանց ականջին հաս„նի, նոքա ուղղակի նուիրուած էին գործին և „ո՛չ այս կամ այն կուսակցութեան...

„Վերջապէս մինչ ցարդ և այսուհետև ևս, իբր „ժողովրդի զաւակ, մենք նուիրուած եմք Գոր„ծին և Ազգային շահերին, ինչպէս իմ Սիրելի „գործակից և աշխատակից Մուրատը իւր ՍԱԼ „ստորագրութեամբ յօդուածները, նոյն„պէս իմ ԴԺՈՒՔ և ԳԱԶՊԻՆ ստորագրու„թեամբ յօդուածները մեր յօժար կա„մօք երկուքերթերում հաստատուած են

„ժողովրդի աղեխարշ վիճակը և Մայր Հա„յաստանի մէջ եղած արտասովոր անցքերը „աշխարհի առաջ մերկապարանոց ընելու հա„մար: Մեր այդ անմոռանալի ընկերը պ. Մուրատը և „ես ինքս միշտ ջանացած եմք և կը ջանամք որքան կա„րելի է միութիւն գոյացնելը, քանզի գործի յաջողու„թեանը համար անհրաժեշտ է միութիւնն: Մուրատը „գլուխ տրաքեցնելու չափ կը ցանկար և կը ջանար նը„պաստել միացման գործին: Վերջապէս մեր ամեն մի „քայլը յօգուտ ժողովրդին նուիրուած է և պիտի նու„իրուի: Մեք մեղանչած կը լինէինք ճշմարտութեան դէմ, „եթէ դոքա ժողովրդի այս նեղ և օրհասական բոպէ„ին զ'բաղուած չը լինէին, անձնական մանրակրկիտ հա„շիւներով, իրենց նահատակների քանակութեամբ պար„ծենալով, մինչդեռ այն կողմ երբ ժողովրդի մաքուր „արիւնը հեղեղի նման սկսեց հոսել, քարերն էլ գա„լարեցան, և Եւրոպական Մամուլը ձայն բարձրացրեց: „Եւ այդ բոլորը ո՛չ թէ Հ-ի կամ Դ-ի տեղեկագրե„րով եղաւ, այլ ժողովրդի արեան գնով... Մեր խ„կական ոյժը ներկայացնողը ժողովրդն և այն անհատ„ներն են՝ որոնք նետուել են և նետուելու են կրակի բո„ցի մէջ, այն որ ժողովրդի ներկայ կացութեան և ա„պագայ երջանկութեան համաձայն չէ և համակիր, այն „է ժողովրդի շահուց թշնամին, ժողովրդը ո՛չ մի ժա„մանակ չէ՛ կարող նրանց հետ հաշտուիլ: Ժողովրդն „է տանջուող, և ինքը ժողովուրդը պիտի լինի, իրեն „ղեկավար, վերջապէս ժողովուրդն արթունէ և այդ բո„լորը անմոռանալի կերպով կը տեսնէ“...

Ահա՛ թէ որն է փաստը, „Հնչակի“ պ. Խմբագրապետ. Հրապարակախօս: Երեւում է, որ դուք ձեր անկումը նա„խատեսել էք, որովհետեւ մեզ տալ էք արդէն ձեր հրաժեշ„տը. սա փախչել է... ձեռնոցը դուք էք ձգել, դուք էք մեզ կռւի հրաւիրել ձեր անամօթ վարմունքով „ազգիս ներկայ ծանր վիճակում“, դուք էք „քաջութեամբ“ ընդունել մեր «վախով նետած ձեռնոցը» եւ դո՞ւք էք տալիս «մնա՛ք բա„րեւ»). ո՞ւր էք փախչում եւ մտնում ազգի փեշի տակ: Ա՜խ, „դուք խաբեբաներ, կեղծաւոր փարիսեցիներ. երբ պարզ „տեսնում էք ձեր բարոյական անկումը, ա՛յն ժամանակ էք „սկսում „ազգիս ներկայ ծանր վիճակի“ վրայ մտածել. ազ„գի ծանր վիճակի վրայ խորհողներ, ինչո՞ւ հենց այս ծանր „բոպէում բարձրացրիք այդ հնարած խնդիրը, որ պատուի „խնդիր է եւ լռել չի կարելի, ու այն էլ որոտալով, սպառ„նալիքներ տալով. ինչո՞ւ ա՛յն ժամանակ չբողոքեցիք, երբ „լոյս էին տեսնում նոյն յօդուածները, եթէ դուք մաքուր էք.. Բայց երբ Սասունի կոտորածը եղաւ եւ առաջին անգամ «Դրօշակը» հրատարակեց թղթակցութիւն, իսկ երեւակայութեամբ հայկական յեղափոխութիւնը մենավաճառ արած Հնչ. ո՛չ, որ մի խիստ հարուած, մի անկում էր ձեզ համար, եւ հայ ժողովրդին նորից խաբելու՝ թէ ամեն տեղ դուք էք, թէ ձեզնից դուրս «չիք փրկութիւն», ահա հնարեցիք լկտի մեղադրանքը: Բաւական է այսքանն էլ... Սոփլուած լինելով մեր պատիւը պաշտպանել ձեր կասկածելի գրական բարոյականութեան դէմ, մենք կը շտապենք թողնել գրիչը, երբ բուն խնդիրը պարզելուց յետոյ, մնտենում ենք

ձեր ձեզ վայելուչ հայհոյանքներին։ Հետեւել ձեզ, ձեր կեղտոտ գրական զբօսանքներում, հետեւել ձեր փողոցային, սրիկային վայել հայհոյանքներին, „յայտնի տեսակի մարդկանց“ բերանից դուրս պրծած խօսքերին, որոնց ազատ կարող էք գործ ածել ձեր ինտիմ շրջանում, մենք ո՛չ ցանկութիւն ունինք, ո՛չ ժամանակ...

Դաշնակցութիւնը իւր օրգանով ուրիշ գործ եւ պարտականութիւն ունի կատարելու. նա ծառայում է յեղափոխական գաղափարին, մինչդեռ «Հնչակը» ամեն ճիգ է թափում յեղափոխական շարժումը իրեն, իր հիւանդոտ փառամոլութեան ծառայեցնել եւ այդ նպատակին հասնելու համար նա ուռչում է ուռչում, որպէսզի ամբողջ հայկական շարժումը իւր մէջ պարունակի։ Բայց զգուշացէ՛ք, պ. Խմբ. Հրապարակախօս, որ առակի գորտի պէս, ձեր խղճուկ մարմինը չճայթի եւ աճող յեղափոխական հեղեղը ձեզ իր ափը չնետի, որպէս վնասակար, պարազիտ մի դիակ... Նշոյլներն արդէն երեւում են։ Շարունակեցէ՛ք նոյնը այժմեան ոգով, ձեր միմոսական անանուն թերթի միջոցով եւս, որով ինքներդ էք ապտակ ուտում, նոյն իսկ ովկեանոսի ձեր սիրեցեալ միւս ափերից...

Մաքրեցէ՛ք ձեր կեղտը...

* * *

«Դրօշակի» այս տարւայ առաջին համարի առաջնորդողը հանգիստ չէ տալիս «փաստեր կեղծող» „Հնչակին“։ Իբրեւ պատասխան սոյն առաջնորդողի, Հնչ., հետեւելով մեզ, իր երկրորդ համարում տպագրեց նոյնանման մի առաջնորդող, ա՛յն տարբերութեամբ, որ յեղափոխական բոլոր զոհերին Հնչակի աւազանում մկրտեց՝ նրանց ճակատին դրոշմելով „Հնչ. արիւնագոյն կնիքը“, մինչեւ իսկ վարժապետ Մարգարին, որի մասին նա միայն տեղեկութիւն ստացաւ Դրօշակից. սա պատիւ է բերում Հնչ., որովհետեւ ինքն իրեն հաւատարիմ է մնում կեղծել, ստել, խաբել... Դրանով չբաւականացաւ. իւր հաւատարիմ ընկեր անանուն թերթում էլ լուսանքներ թափեց, եւ վերջապէս նոյն յօդուածի առթիւ տպագրել է չորս սիւնեակ Դրօշակին նուիրած ամբողջ յաւելուածում. այս անգամ էլ ուրիշ վարագոյրի տակ՝ իբր թէ պատմական փաստեր է շտկում. խե՜ղճ մարդ։

Մենք դարձեալ կրկնում ենք՝ Ցակոբը ո՛չ մի կուսակցութեան պատկանելիս չէ եղել. Հնչակը սուտ է խօսում, Ցակոբը իրեն հնչակեան երբէք չի անուանել. դրա հերքումը մենք չհրատարակեցինք՝ ամօթ համարելով զբաղել եւ զբաղեցնել հասարակութիւնը։ Ո՛չ մի կասկած չկայ, որ Աշըղեանի անկումը անմիջական հետեւանք է Ցակոբի փորձի, որովհետեւ հենց այն օրւանից Աշըղեանը քաշւեց իւր սեփական տունը եւ չէր մասնակցում ոչ մի գործի, չնայած որ աշխատում էին նրան համոզել, որ առ այժմ գոնէ պատրւարքական թղթերին ստորագրէ։ Սա փաստ է, որ, ի զարմանս մեր, հակառակ իւր սովորութեան, խոստովանւում է ինքը Հնչ. էլ ասելով՝ վերջինս(Աշըղեանը) շտապեց փակւել իր Մաքրիքէօյի բանտում. բայց շարունակում է յատուկ իր ձեւով՝ „աւելի ամրացնելու նրան (Աշըղեանին) իր պաշտօնում, ...մէկ ընդարձակ միջանցք բաժանում է Ցակոբի գործի օրն Աշըղեանի անկման օրից“ եւ այլն։ Է՜հ, ինչ պէտք է ասել նրան, որ միշտ ստում, խեղաթիւրում է փաստերը. ահա ձեզ էլի ապացոյց՝ Պոլսի հայկական գործերի ղեկը գնում է միայն Սիմոն պէյի ձեռքին եւ միայն այն պատճառով, որ հնչակեանները նրան վիրաւորել են. այդ վէրքից էլ նա մեռաւ։ Ոչ միայն ամեն մի պոլսեցի, այլ եւ Պոլսի կեանքին քիչ ծանօթ մարդն անգամ գիտէ, որ Սիմոն պէյի նմանները տասնեակներ են, որ դա մի կազմակերպւած ընկերութիւն է, որ կարող է Սիմոն պէյի պէսներից մի քանիսը ընկնել, բայց պատրիարքը մնալ իր տեղը։ Բայց Հնչակին հարկաւոր է իրեն վերագրել, իրեն սեփականացնել յեղափոխական ամեն երեւոյթ, գործ եւ այն ասիճանի վարակւել է այդ հիւանդութիւնով, որ հասցրել է մինչեւ մոլութեան։

Մի բան, որ անտերելի կերպով չի յիշւած մեր յիշեալ առաջնորդողում, այդ Վանի կախաղանն է. բայց Հնչակը այդ մեզ չէ յիշեցնում, որովհետեւ կախաղան բարձացող հերոսը հնչակեան չէ եղել։ Եւ դեռ Հնչ. յանդգնութիւն ունի պատմութեան էջեր սրբագրելու...

* * *

Հնչակը նոյն յաւելուածում պատասխանում է եւ իր վերաբերմամբ մեր արած քննութեան։ Այդ մասին առ այժմ մենք կասենք, որ նա մեր ձեռքը տալիս է էլի մի նոր փաստ ասելու եւ կրկնելու՝ Հն. զուրկ է ինքնուրոյնութիւնից, նրա Խմբ.-պետ-Հրապարակախօսի գլխում քաոս է տիրում, որ նա չի հասկանում ո՛չ Մարքսին եւ ոչ էլ սոցիալիզմը, որ նա եղել է եւ է իւր տեսական յօդուածներում գրական պարազիտ։ Սպացոյցներ բազմաթիւ.-թէ ծրագիրը, թէ առաջնորդողների մեծ մասը, գրքոյկների յառաջաբանները, մի խօսքով, տեսական գրուածքները կամ բառացի թարգմանութիւն են, կամ կոյր նմանողութիւն, որ Հն. ծախել է հայ հասարակութեան «իւր սեփական ֆիրմայի տակ» եւ անամօթաբար իւր գլխին է սեփականացրել։ Իբրեւ ապացոյց մեր ասածների մենք առաջ կը բերենք առ այժմ միայն երկու փաստ.—Մինդեան օրից իրեն սոցիալ-դէմոկրատ համարող Հն. ծրագիրը «Նարոդնայա Վոլիա»-ինն է բառացի թարգմանութեամբ. Լասալի «Սահմանութեան մասին» գրքոյկին կցորդած յառաջաբանը Էնգէլսի «Գիտական սոցիալիզմի» թարգմանութիւնն է մի քանի կրճատումներով, եւ ահա թէ ինչու է նա «Էնգէլսեան ոճ»։ Այժմ հետաքրքիր է իմանալ թէ ով է եղել «շատ բան չհասկացողի վիճակում»։

Հենց այս երկու փաստից էլ կարելի է շատ որոշ կերպով եզրակացնել, թէ Հն. ինչ տեսակ թերթ է եւ նրա Խմբ.-Հրապարակախօսը ի՞նչ «գրական տիպ»։

ՆԻՒԹԱՏԻՊԱԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

„Դրօշմ“-ից 100 ռուբլի, „Լարիջան“-ից 127 ռուբլի, Գանձ-ից 100 ռ., „Անկելանոց“-ից 35 ռ., „Ճառագայթ“-ից 100 ռ., „Ծիածան“-ից 50 ռ., Հայկաշէնի Վրէժ խմբից 10 ռ., Սառնաշէնցի Ա. Ս-ձէից 20 ռ., Սառնաշէնցի Ս. Ս-ձէից 20 ռ., Սառնաշէնից 14 ռ., Նոր Քաղաքից 36 ռ., Ս. Պգ. Տ. Ա-ից 3 ռ.

Քարոտ քաղաքի 1894 թ-ի մուտքը.—

Հանգանակութիւն 195 ռ. 86 կ., Սլաք ընդհանրապէս 70 ռ. 85 կ., Հաւաքածու 110 ռ. 25 կ., Պարագեօզ 21 ռ. 70 կ., Զրվէժ 62 ռ. 20 կ.

Վիշապ քաղ. կետր. մնդուկի մէջ ստացւեցան. Մատթէոսեան խմբ. 150 դահ., Վարդանեան խմբ. 55 դահեկ., Վանօի խմբ. 343 դհ. 20 փր., Կամաւորներ խմբ. 273 դհ., Ի սէր ազգի 140 դհ., Սահակ խմբ. 100 դհ., Վրէժ 20 դհ., Յովնան խմբ. 360 դհ.—Դուէն քղ. Վառօդ 95 դհ. Եւ 100 դհ.

Վասպուրականի Ռշտունեաց խմբ. 1000 դահեկ.

Դաշնակցութեան անծանօթներից խնդրւում է թղթակցութեան եւ նուիրատուութեան համար դիմել.
L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան։